

**Ինչպէս աճիլ հոգեւորապէս**


Քրիստոսը իր կեանքին մէջ ընդունող մարդը իր հոգեւոր կեանքին մէջ տեղբայլ պէտք չէ ընէ: Եթէ տեղբայլ ընէ, այլ խօսքով, եթէ չաճի իր հաւատքին մէջ, եթէ չհասուննայ Աստուծոյ հետ իր սիրալիր ու սուրբ յարաբերութեան մէջ, այդ կը նշանակէ, թէ իր հոգեւոր կեանքը սիսալ ընթացքի մէջ է: Նման պարագային, պէտք է դիմէ իրմէ աւելի հոգեւոր փորձառութիւն ունեցող անձի մը խորհրդատութեան: Միայն եկեղեցի երթալով, Սուրբ Հաղորդութիւն առնելով եւ պատարագի մասնակցելով չենք աճիր: Ամելու համար խիստ անհրաժեշտ են երեք բաներ.

- 1) Աղօթքով ամէն օր մէնիկ պահ մը անցընել Աստուծոյ հետ
- 2) Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ Ս. Գիրքի ընթերցում կատարել
- 3) Հետեւիլ հոգեւորապէս աճած ու փորձառու անձի մը թելադրութիւններուն:

**ՍԱԿԱՆ 9**

Բայց դուն գիտես եւ կը տեսնես անպաշտպան մարդոց ցան ու տառապանքները, եւ դուն ինքդ անոնց դատին պաշտպանն ես: Տկարը ինքզինք քեզի՝ կը յանձնէ, դուն որքին:

**ՀԱՅՑ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ**



**ՊԼԱՎԱՐԻ ԽՈՂՀՈՒԹԻՒՆ ՀՎԱԼԱԽՈՒՄ**

**2.-Պատրաստութիւն ընծաներուն**

**Գ.-ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՄԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԽԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ**

«Կը դաւանիմ եւ կը հաւատամ, թէ Քրիստոս ես դուն, Աստուծոյ Որդին, որ աշխարհի մեղքը վերցուցիր»:

Ապա կը բեկանէ նշխարը, չորս մասերու կը բաժնէ Փրկչին Մարմինը խորհրդանշող նշխարը, ըսելով.- «Լրուն Սուրբ Հոգիին»:

Հասած է պահը հաղորդուելու. նախ պատարագիչ քահանան ինք կը հաղորդուի ճաշակելով Քրիստոսի կենարար Մարմինը, ըսելով.- «Հաստատապէս կը հաւատամ ամենասուրբ Երրորդութեանդ. Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին»:

Հաւատալով կը ճաշակեմ սուրբ, կենարար եւ փրկարար Մարմինդ, թէ Քրիստոս, իմ Աստուծու, մեղքերուս թողութեան համար»:

Շարունակելի



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ՀԱՅԻՆԵՐՈՒՄ ԼՂՅԱ (Ա. 119.105)

Ժ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 9 ՄԱՐՏ 2025

Ժ-Ի-10

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԹԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ  
Ես. 33.2-22: Հո. 12.1-13.10: Մտթ. 5.17-48

**ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ  
ԸՆՍ ՄԱՏԹԵՈՍԻ 5.17-48**

Մի՛ կարծէք, թէ եկայ Սովուսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու: Չեկայ ջնջելու, այլ՝ ամբողջացնելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքներն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի իրականանան առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով, որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ պատուիրէ նոյնը կատարել, երկինքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով, որ գործադրէ պատուիրանները եւ նոյնը ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ: Կ'ըսեմ ձեզի, երկինքի արքայութենէն ներս կրնաք մտնել այն ատեն միայն, երբ Աստուծոյ պատուիրաններուն նկատմամբ իրենց հաւատարմութիւնը փարիսեցիներուն եւ օրէնքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութենէն աւելի ըլլայ:

Լսեր էք, որ անցեալին ըսուած է. «Մի՛ սպաններ, որովհետեւ ան որ կը սպաննեէ, պիտի դատապարտուի»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Ով, որ առանց պատճառի իր եղորդ դէմ բարկանայ, պիտի դատապարտուի: Ով, որ իր եղորդը յիմար կոչէ, դարձեալ ատեան պիտի բերուի կամ ան, որ իր եղորդը անմիտ կոչէ, Գեհենի կրակին պիտի դատապարտուի: Եթէ զոհի սեղանին վրայ ընծաղ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես որ եղորդդ վշտացած է քեզմէ, ձգէ ընծաղ սեղանին առջեւ, զնա՞ն ասիս հաշտուէ եղորդ հետ եւ ապա եկու՞ր եւ ընծաղ Աստուծոյ մատուցանէ:

Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ, երբ տակալին ժամանակ ունիս, այլապէս՝ քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին եւ բանտ կը նետուիս: Վստահ եղի՞ր, թէ բանտէն պիտի չելլս մինչեւ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես:

Լսեր էք որ ըսուած է. «Մի՛ շնաք»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի, թէ ով որ ցանկութեամբ նայի ունէ կնոջ՝ արդէն իսկ սիրտին մէջ շնորհին ըրած կ'ըլլայ անոր հետ: Եթէ աջ աշք քեզ կը գայթակղեցնէ, համէ՛ եւ նետէ՛ զայն, որովհետեւ նախընտրելի է, որ անդամներէն մէկը կորսնցնես քան թէ ամբողջ մարմնով դժոխը նետուիս: Եթէ աջ ձեռք քեզ կը գայթակղեցնէ, կտրէ՛ ու նետէ՛ զայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներէն մէկը կորսնցնես, քան թէ ամբողջ մարմնով դժոխը նետուիս:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԹԵՇՈՌՈՍ ԶՈՐԱՎԱՐ

Ամասիյ Սարու գիտէն՝ բարեպաշտ ծնողի զաւակ, կը պատկանէր Մաքսիմիանոսի օրով զինուրներու այն կարգին, որ կը կոչուէր դիոն, այսինքն «նորամուտ»։ Շամբորդած միջոցին օր մը հանդիպեցաւ ահազին վիշապի մը, զոր սպաննեց նիզակով եւ հաւատքով։ Յետոյ, երբ յայտնուեցաւ քրիստոնեութիւնը, քննուրեան կանչուեցաւ, համարձակ խոստովանեցաւ ստուգութիւնը, եւ բացի այդ, գիշեր ատեն կրակի տըւաւ մեծագոյն աստուածուի Ուժայի մեհեանը։ Այս պատճառաւ սաստիկ քանակութելէ վերջ բանտ նետուեցաւ, որ երկնային տեսիլի միսիքարութիւնն ունեցաւ։ Կրկին հարցաքննուրենէ վերջ այրեցին սուրբը 306-ին։ Նշխարները ամփոփեց Եւսեբիա անունով տիկին մը իր տան մէջ, որ յետոյ Եկեղեցին վերածուեցաւ։

Հայ Եկեղեցոյ տօնացոյցին համաձայն թէողորս Զօրավարին տօնը կը զուգադիպի Շաբաթ՝ 8 Մարտ, 2025-ին։

## ԱՌԱՎԿ. ԳԼՈՒԽ ԺԵ. 10-12

Բարի մարդուն խրատը ընդունելի է հարազատներուն համար, իսկ անոնք որ յանդիմանուրեան չեն հանդուրմեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան։

Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սրտերը։

Անուղղայ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցիր գիտակից մարդուն իետ։

## ՅԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

**Պահեցողութիւնը պարտաւորիչ հրահա՞ն է հաւատացեալներուն համար**

Ոչ։ Պահեցողութիւնը պարտաւորիչ հրահանգ մը չէ. այլ՝ յանձնարարելի կանոն։ Պահեցողութիւնը պէտք է ըլլայ ինքնարուխ նուիրում մը, կամաւոր զոհողութիւն մը ենթակային կողմէ՝ առ Աստուած։

Եկեղեցին պահքի օրեր հաստատած է ժողովուրդը ուղղելու, չափաւորութեան եւ ժումկալութեան վարժեցնելով՝ Աստուծոյ մօտեցնելու համար։ Պահքը թէեւ պարտաւորիչ չէ սկզբունքով, սակայն Եկեղեցոյ վերին իշխանութիւնը հարկ եղած պարագային իր ժողովուրդը որկրամուրթեան ախտէն եւ կերուխումներուն յառաջացուցած մեղքերէն ձերբագատելու համար՝ իրաւասութիւն ունի պահքի օրեր հաստատելու եւ անոնց գործադրութիւնը հետապնդելու։ Այդպիսի պարագաներուն, հաւատացեալ ժողովուրդին պարտականութիւնն է հնագանդիլ իր առաջնորդութեամբ յետք կատարել անոնց թելադրանքները յօժարակամ սրտով։

Պահքի համար սահմանուած են շաբթուան երկու օրերը՝ Չորեքշաբթի եւ Ուրբաթ։ Չորեքշաբթին յիշել կուտայ Քրիստոսի մատնութիւնը, իսկ Ուրբաթ օրը՝ յիշատակութիւնն է Քրիստոսի չարչարանքներուն։

Պահեցողութիւնը պարտաւորիչ հրահանգ մը չէ. այլ՝ յանձնարարելի կանոն։ Պահեցողութիւնը պէտք է ըլլայ ինքնարուխ նուիրում մը, կամաւոր զոհողութիւն մը ենթակային կողմէ՝ առ Աստուած։

## ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

**ԱՇԽԱՏԻՆՔ ՄԵՐ ՀԱՅԵՎՃՔ ԱՇԻԵՂԾ ՔՐԻՍՏՈՒ, ՈՐ ՅԱՂԹԱԿԱՆՈՐԾԵՍ ՄԵԶԻ ԿԸ ՄՊԿԱԾ**

«Յիսուս կանգնած էր ջուրին եւ վերքը»։ Հայրերէն մին խօսելով այս բառերուն մասին՝ կ'ըսէ. «Քրիստոս անցաւ Գողգոթայի փոթորկալից ծովէն, արիւնի ծովէն, եւ աւարտեց իր գործը՝ իրագործելով մարդկութեան փրկութիւնը, բայց այժմ, ան կը կանգնի ծովուն եվերքը, անոր ափին, յաղթականօրէն եւ հպարտօրէն, սակայն իր աշակերտները տակաւին փոթորկալից ծովուն վրայ են, որովհետեւ 37 կատարելիք գործ ունին, կը պայքարին եւ կ'աշխատին»։

## ՄԵՐ ՍՈՐՎԵԼՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Միրելիներ, այնքան ատեն երբ փոթորկալից այս աշխարհին եւ այս մարմինին մէջ ենք, ընելիք ունինք, տանելիք աշխատանք ունինք, թափելիք քրտինք ունինք։ Պէտք է ընենք այդ բոլորը անվախօրէն եւ մնայուն կերպով։ Պէտք է ժրաշանօրէն, յոյսով եւ հաւատքով աշխատինք, եթէ երբեք կ'ուզենք կեանքի ծովուն եվերքը հասնիլ եւ հոն Քրիստոսի հետ միասին յաղթականօրէն կանգնիլ։ Հոն է Քրիստոս, փոթորկալից կեանքի ափին, յաղթականօրէն մեզի կը սպասէ։

Աստուած բոլորիս անփորձանք պահէ Տիրոջ օրհնութեամբ։

## ԵԹԵ ԿԱՍ ԵՐԲ ԿՌԴԵՍ...

**ԵՐԲ ԿՌԴԵՍ ԳԻՏԱՎ ԹԷ ՎԱՏՈՒՎ Ի՛ՄԶՊԼՍ ԿԸ ՎԱՐՋԱՑՏՔ ԱՐԴԱՐ, ԿԱՐԴԱՌ ՍՎԴՄՌՈՍ 84**

Ի՞նչ սիրելի է տաճարդ, Ամենակալ՝ Տէր, ամբողջ հոգիով կը ցանկամ եւ կը փափաքիմ գաւիթներուդ մէջ բնակիլ, Տէ՛ր։ Սիրտս ու մարմինս ցնծութեամբ կ'օրհներգեն քեզ, անմա՛ն Աստուած։ Ճնճղուկներն իսկ բոյն կը դնեն Սեղանիդ քով, ծիծենակը հոն բոյն կը շինէ իր ձագերուն, Ամենակալ՝ Տէր, իմ Թագաւորս եւ Աստուածս։ Երնէ՛կ անոնց, որ տանդ մէջ կը բնակին, որովհետեւ անդադար քե՛զ պիտի օրհնեն։ Երնէ՛կ անոնց, որոնց դո՛ւն ես օգնականը։ Երնէ՛կ անոնց, որոնք սրտանց կը փափաքին քու տաճարդ ուխտի ելլել։ Հավիւ անոնք կ'անցնին Տրտմութեան Հովհիտէն, չոր հովհիտը ովասիսի կը վերածուի, որովհետեւ աշնանային անձրեւները օրհնութեամբ կ'ողողէն վայն։ Կը զօրանան անոնք տակաւ, աւելի եւ աւելի, մինչեւ գան՝ Սիրոնի մէջ Աստուծոյ դիմաց կանգնին։

Ո՛վ Տէր, Աստուած Ամենակալ, լսէ՛ աղօթքս, խնդրանքներս մտիկ ըրէ, դուն՝ Աստուածը մեր հայրերուն։ Դուն մեր պաշտպանն ես, ո՛վ Աստուած, տես եւ պահէ Օծեալդ։

Կը նախընտրեմ գաւիթիդ մէջ իմ անցուցած մէկ օրս, քան թէ հակար ուրիշ օրեր՝ գաւիթէդ դուրս ապրուած։

**Շարունակել սաղմոսէն**